

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօշար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՆԻԿ

Մանուցման տողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ԶՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Redaction u journal
"Iravounk"
VARNA (Bulgaria)
Редакция
на ВѢСТНИКЪ
"Кравунк"
ВАРНА

Գրութիւնք եւ լեւ
տրութիւնք

ՌՈՒՍԻՈՅ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

—*—*—

Այլեւո՞ք Ռուսիան տակաւին խիստ հեռու է հանդարտելէ, թէ և իր վեհապետէն բաւական գոհողութիւններ խլեց, Տուման բացուեցաւ և իր ժողովրդային ազատամիտ ներկայացուցիչներն ունեցաւ:

Ամեն կողմ սպաննութիւնները, ձերբակալութիւնները և ուսմանը պայթիւնները անընդհատ կը շարունակեն, և անհնար է գուշակել թէ երբ պիտի վերջանան ասոնք:

Պալիկեան նահանգաց վիճակը մանաւանդ օր քան զօր աստիճանաբար կը ծանրանայ և խիստ խառնաշփոթ է: Յեղափոխական խումբեր ամեն օր զինուորութեամբ կը թալանեն ու սպաննութիւններ կը գործեն:

Ոստիկանութիւնը անընդհատ յեղափոխականաց կողմանէ պատրաստուած և պահուած մեծաքանակ ուժեր երևան կը հանէ, ինչպէս ըրաւ այս վերջին օրերս Բեթերսպուրկի, Օտեսայի, Ռոստովի և Թիֆլիսի մէջ:

Յեղափոխականները ամէն կողմ ուս պաշտօնէից և ոստիկանաց դէմ զէնք կը բանեցնեն, և կառավարութիւնն ալ իր խտուածութիւնները գործածելէ չը դադարիր:

Բեթերսպուրկէ մայիս 1 ինքաշուած հեռագիր մը կըսէ թէ՛ շատ մը մեծ մասամբ գործաւորներէ բաղկացեալ խումբեր կարմիր դրօշակներ պարզած՝ յեղափոխական երգեր երգելով քաղաքապետական պալատին և երկու բանտերու առաջը աղմկալից ցոյցեր են ըրած ի՛նչպատ քաղաքական բանտարկելոց ազատման:

Նոյն հեռագիրը կըսէ նաև թէ՛ Բեթերսպուրկի նոպէլեան ժողովրդային Տան մէջ 2000 հոգիէ բաղկացեալ միթինկի մը ատենախօսք պահանջեր են նոյնպէս

որ քաղաքական յանցանորաց համար ներումն ըլլայ, բայց ոստիկանապետը այն Տումը պաշարել տալով զինուորութեամբ պարպել տուեր է ժողովարհը:

Ուրիշ հեռագիր մ'ալ դարձեալ մայիս 1 ին ուսաց մայրաքաղաքէն քաշուած կիւմոյնէ թէ՛ Բեթերսպուրկի նահանգը տի հրամանատար Գումիշ Ամիրալը, որ անտանի ընդունութեամբ ու զայրացկոտութեամբ կը վարուէր միշտ նաւային գործաւորաց հետ, այս անգամ հրաման չտալուն համար որ գործաւորները մայիս 1 ին տոնը կատարեն, իսկայն հրացանով զարնուեր ու սպաննուեր է:

Ահա՛ այս տեսակ եղելութիւններ ամեն օր չեն պակսիր մեզ հասած եւրոպական լրագրաց մէջ և չենք կարող լուրջ կերպով գուշակել կամ գէթ մասամբ ենթադրել թէ ամեն ասոնց վախճանն ո՞ր պիտի յանգի:

Ի նկատի առնելով Տումայի բացուելէ երկու օր առաջ Ռուսիոյ հրատարակած Ռիմնակսն օրէնքը, որ սովակապէս Տումայի գործաւորութիւնները սանձելու համար խմբագրուեցաւ, մեզ այնպէս կը թուի թէ՛ առանց մերձաւոր մեծ յեղափոխութեան մը և մեծ արիւնհեղութեան մը, ինչպէս եղած է երբեմն Ֆրանսայի մէջ, Ռուսաստանի գործերը չպիտի կրնան իրականապէս կարգադրուիլ յօգուտ ժողովրդեան, որոյ ճգնաժամը տակաւին շատ հեռու է վերջանալէ:

Չարը բան մը ըրած երևնալու համար Տում մը ձեւեց իր ուզած կերպով, և ո՛չ ժողովրդեան պահանջած ու ակնկալած ձեւով, իր մամիկը Բաթէրին Բ. կայսրուհին նմանօրինակ պարագայի մը մէջ ըսած էր. շատ լաւ կտրուեցաւ, Ռիմայ պետք է նորէն կարելի կտրուածը: Ի՞նչէ՞ Նիքոլայ Բ. ալ չպիտի վերադառնայ իւր բացարձակ կամակատարութեան, քանի որ իր օրօկրատ ու թեմէն մազի չափ հրաժարելու տրամադրութիւն չունի:

Հ.

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Ամսիս 26 ին խուզարկեցին Գեորգ Ղարաջեանի բնակարանը և բանտարկեցին Մետիսում:

Հաւաքարի մօտերը խուլիգանները աշխատում են զրգռել ժողովրդին, ուստ լուրեր տարածելով, որ իբրեւ վրացիները պատրաստուած են յարձակուիլ հայրի վրայ:

Վերջին օրերս Թիֆլիզում խուզարկութիւններ կը կեն շատացի են ժանաւաճող Հաւաքարում:

Շուշուի հեռագրում են «Մշակին» որ Աշոտ եպիսկոպոսի առաջարկութեամբ թեմական դպրոցի հոգաբարձութիւնը ուսուցիչներին նրանց, որոնք բոլորտ են արել մայիս 7 ի էջմիածնի համաժողովը՝ ոտճիկի իններորդ մասից զրկել իբրեւ տուգանք:

Ապրիլ 28 ին ժամը 3 ին մօտերը քաղաքի մօտ կած բազալիսան անտանաւ փողոցում, ոպանւած մի Թուրքի պատճառով, ժողովրդի մէջ չփութութիւն ընկաւ:

Խառնութիւնը բաց անել: Զօրք եկաւ զէպիքի տեղը: Շատերի տեսիլով սպաննողը թուրք է եղել, որն մի քանի անգամ ասորճանից կրակելուց յետոյ, անյայտացել է, Լուր է պարտում, որ մի թուրքի ցուցմունքով յանցաւորը բռնել է:

Յանկարի է ստուգիլ, թէ ինչ էր այս, պատահական մի զէպք թէ պրովոկացիա:

Կ. ԵՄ

ՏՈՒՄԱՅԻՆ Բ. ՆԻՍՏԸ

Վերջին օրերս հասած հեռագրերն եւ եւրոպական լրագրիւնները Տումայի երկրորդ նիստին ժանրամասնութիւնները կը յայտնեն:

Այս Բ. նիստը մեծ ոգեւորութեամբ տեղի ունեցաւ մեր նախապէս ծանուցած ին պէս Ապրիլ 29 ին:

Երեսփոխանաց հաւաքման համար որոշեալ ժամէն առաջ, բաղմունքներ, Դաւրիտեան պալատ տանող փողոցներուն մէջ լեկուեր էր: Ոստիկանութիւնը պալատէն խիստ հեռուն քնց հետաքրքիր ժողովուրդը, բայց այսուհանդերձ չկրցաւ արգելել այն խանդավառ ուրախակցական ձայները, որ ժողովուրդը արձակեց երբ զիսաւոր երեսփոխանք սկսան հետզհետէ գալ ու մտնել պալատին մէջ:

Ոստիկանութեան պաշտօնեաներ եւ ժանդարմներ չըջակայ շատ մը տուներու մէջ դարան մտած պահուած էին, և բազի սակէ Բաթոպոստէի զօրագունըն մի քանի գումարտակ պալատին պարտէզին եւ չըջակատին մէջ զետեղուած էին նախազգուշութեան համար:

Նիստը բացուեցաւ ընդ նախագահութեամբ Մոսկովի, որ Տուման իր առաջին նիստին մէջ ընտրած էր:

Նախագահը կարգաւ տուաւ նախ Տումային ուղղեալ շնորհաւորական բազմաթիւ ուղերձները, յետ որոյ ժողովը իւր գիւտնի կազմութեան ձեռնարկելով ընտրեց ձայնի մեծագոյն առաւելութեամբ իւր երկու փոխնախագահները Պ. Տալկորոքի իշխանը 382 ձայնով և Բրոֆէսէօր Կրեմլսկոյ 372 ձայնով: Շախուքսի իշխանը Տումային Ատենադպրոցի ընտրուեցաւ 383 ձայնով, իսկ հինգ օգնական Ատենադպրոցներու ընտրութիւնները կաաարուեցան միաձայնութեամբ:

Այս ընտրութիւններէն յետոյ՝ Սահմանադրական-Ռամկավարական կուսակցութեան երեսփոխաններն Ռոստիշկի խօսք անելով առաջարկեց, որ ի պատասխանի Գահաճախն ուղերձ մը ներկայացուի կայսեր, եւ այս ուղերձը 33 անգամէն բաղկացեալ Յանձնաժողովոյ մը կողմէ խմբագրուելով՝ բոլոր քաղաքական բանտարկելոց ազատ արձակման անհրաժեշտ կարեւորութիւնը յայտնէ:

Ժողովը այս առաջարկութիւնը ընդունելով՝ Ռոստիշկի հետեւեալ խօսքերը արտասանեց:

«Իմ յարուցած խնդիրս կուսակցական խնդիր մը չէ, այլ ազգային է: Արեւմտեան համար եղած առաջարկութիւն մը՝ օրէնքի ծրագիր ըսել չէ, ներ-

ման շնորհումը կայսեր իրաւասութեան
կը պատկանի :

«Աւերմն ես՝ օրէնքի ծրագիր մը չէ
որ կը ներկայացնեմ ձեզ, այլ ամբողջ
ժողովրդեան մը քաջած առաւպանքն
է որ կը յայտնեմ : Մենք աղաչանք
մըն է որ կուղղենք վեհապետին, եւ
ամբողջ ժողովրդի մը փափաքն է որ կը
յայտնենք իրեն, եւ ես չեմ ուզեր որ
այս փափաքը պահանջումի փոխուի :
Ընտրական գործողութեանց միջոցին,
յետոյ ճանապարհին մեր եկած ատենը,
եւ այստեղ նոյնպէս, մեր յաճոն եղաւ
միայն սա բառը, «Ներսէս» :

«Ռուսիան երկիր մէ, ուր ամեն ի-
րաւագէտը այնպէս կենթադրեն թէ
մահուան պատիժ չկայ, այլ սակայն
միայն սա ապրիլ ամսոյ մէջ 99 հոգի
մահուամբ պատժուեցան :

«Այս պատիժը կրողներուն արիւ-
նաթաթախ ստուերները ահա՛՛ կերելին
այս ժողովարարին մէջ, որ հանգարտ
աշխատութեան մը յատկացում է :
Հարկ է յիշել նոյնպէս այն ստուեր-
ները (ծափահարութիւնք) :

«Ներսէսը՝ անձանց կը վերաբերի
եւ ո՛չ յանցանաց : Ոճիրները ներու-
մէն չեն ծնանիր, այլ՝ այն տրուած
տանջանքներէն՝ որոնցմէ որակաւու-
թիւն կը գոյանայ : Այս միջոցին որ
մեր երկիրը վերակենդանութեան ծա-
րաւը կը գոյայ, ներսէսը հարկաւոր է,
եւ պէտք է որ ընդհանուր ըլլայ այն
Մենք պէտք չունենք մասնակի ներ-
ման, եւ պէտք չէ նոյեմբեր 30 ի սը-
խալը նորոգել, Միտան ըլլանք մենք,
ու սահմանափակ ներմանց մասին հա-
կառակ կարծիքներ չգրգռենք : Բո-
լոր ոճրագործ մարդիկ՝ հարկ է որ
յանուն սիրոյ ներումն ստանան, ինչ-
պէս Պետրոս Առաքեալ ստացաւ իր
ներումը :

«Ընդհանուրներուն մը ջարին իւր ժո-
ղովրդեան հետ միացման կնիքը պիտի
ըլլայ : (ուղեղին ծափահարութիւնք) :
Երեսփոխան Ռօսիչէֆի այս բանա-
խօսութենէն յետոյ գիւղական կուսակա-
ցութեան գլխաւորներէն մին երեսփո-
խան Աւատինը յայտնեց թէ՛ «հար-
կաւոր է պահանջել, որ կառավարու-
թիւնը ընդհանուր ներումն հրատարա-
կէ, եթէ ո՛չ ժողովուրդը ինք պիտի
սպառէ բոլոր բանտարկեալները :

«Բաղձալի է, ըսաւ, որ կառավարու-
թիւնը այս ըսածս ընէ եթէ չուզեր
մեծ յեղափոխութեան մը ծագիլը տես-
նել : Կը յուսամ որ կառավարութիւ-
նը խոնհմարար կը վարուի մեծ ձա-

խորդութեան մը առաջն առնելու հա-
մար » :

Տուժային Փօխ-Նախագահ կըրտէս-
կուլ համալսարանի տնօրէնացաւ Աւատինին,
որոյ խօսքերը վերջին ծայր խիստ էին,
Գիւղական երեսփոխան Արեւիկը
եւս միեւնոյն խստութեամբ խօսեցաւ :
Երբ ժողովը վերջացաւ եւ երեսփո-
խանք սկսան փողոցի մէջ երեւիլ,
ժողովուրդեան հոծ բազմութիւն մը
«Ներսէս», «Ներսէս» պօռաւով օղբ կը
թնդացնէր :

ԿԻԼԻԿԻԱ

ԵՒՐՈՊԱՅԻ ԶԱՄԱՐՈՐԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ
Հալէպ 5 մարտ

Հայերու ձերբակալութիւնները
կը շարունակուին : Վերջերս հոս
փոխադրեցին Զէյթունի, Մարա-
շի, Ատանայի եւ Հաճընի մէջ
ձերբակալեալները :

Հայոց վիճակը տխուր է, մա-
նաւանդ Զէյթունի հայերուն
վիճակը : Զէյթունի հրամանա-
տարը նոր մեռաւ : Զերբակալու-
թեանց պատճառը ան էր, նոր
հրամանատարը պիտի գայ քննե-
լու կացութիւնը եւ իր քննու-
թեանց եզրակացութիւնը պիտի
հաղորդէ Հալէպ :

Զէյթունի մէջ ծագած բար-
դութեանց պատճառաւ տեղւոյն
առաջնորդը, Գապեան վարդա-
պետ իր հրաժարականը տուաւ,
բայց չընդունուեցաւ : Հայ շըր-
ջանակներու մէջ կրտուի թէ ա-
ռաջնորդ Տէր Կարապետ վ. Գա-
պեան վատ դերը խաղացած է
այս գործերու մէջ :

Հալէպի նոր նահանգապետը,
Նազըմ Բաշա, կատարեալ դահիճ
մըն է, ինքն է որ կը հրամայէ
ձերբակալութիւնները քաղաքա-
կան ամբաստանեալներուն եւ Հա-
լէպ խրկել կուտայ զանոնք, ինք
անձամբ դատելու համար :

Ռուսիայէն եկող 10,000 Ձեր-
բէջները տեղաւորուեցան Զէյ-

թունի շրջակաները : Այս մար-
դիկը կերակրելու համար, բռնի
հանգանակութիւն կընեն եւ տու-
քերը կանխիկ կը պահանջեն :
(Իրօ Առեւեկիւս)

ԲԱՐԻՋԻ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻԻԼԸ

(Շար. Նախորդէն եւ վերջ)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻԼԸ

ՅՕԴՈՒԱՄ 3. «Փարիզի Հայկական
Միութեան» կրնայ անդամակցիլ ա-
մէն Հ. յ. եւ Հայունի, որ այս կանո-
նագրութիւնը կընդունի եւ որ Ըն-
կերութեան մէկ անդամին կողմա-
նէ կը ներկայացուի Տնօրէն Խոր-
հուրդին :

ՅՕԴՈՒԱՄ 4. Տարեկան անդամա-
վճարն է 10 Փր.

«Մշտական տեղամ» կանուանութիւն
այն անձերը որ մէկ անգամէն կը
վճարեն 250 Փր.

«Բարեբար անդամ» կանուանութիւն
այն անձերը որ 250) Փր. կը նու-
րեն Ընկերութեան :

«Պատուոյ անդամ» կանուանութիւն
հայ եւ օտարազգի անձնաւորութիւն-
ները որոնք կարեւոր աշակցութիւն
մը կը նուիրեն Ընկերութեան նիւ-
թական ու բարոյական բարգաւաճ-
մանը :

Ընկերութիւնը բացի անդամա-
վճարներէն ու գրամական նուիրու-
թիւններէն, կարող է նաեւ իր
նուէր ընդունիլ գուսարներ՝ Ընկե-
րութեան նպատակը չօշափող յա-
տուկ ծրագրիներու համար, ինչպէս
եւ հին ձեռագրեր, գեղարուեստական
ստարկաներ, հին դրամներ եւն :

Հասցի թի վերջին հաւ թուր ժիշոց-
ներէն զատ, Ընկերութիւնը կարող
է սարքել իրեն ի նպաստ վիճակա-
հանութիւններ, թատերական կամ ե-
րաժշտական երեկոյթներ :

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՅՕԴՈՒԱՄ 5. Տնօրէն Խորհուրդը
կը վարէ Ընկերութեան գործերը : Այդ
Խորհուրդը կ'ընտրուի Ընդհանուր Ժո-
ղովէն. բոլոր անդամներու քուէից հա-
մեմատական մեծամասնութեամբ :

Քուէից հաւասարութեան պարագա-

Այս վերջին պարբերութեանը վրայ
Շիրվանեցի Գաբրէլ Ազան խորին հե-
տաքերութեամբ մը նայեցաւ իր ղեմ
գտնուող մարդուն երեսն ու հարցոյց.

— Ինչ ազգ ես դուն :
— Դուրս եմ, ջոջ աղա՛, նկատել
տուաւ Կարիպ Ախպէր :

— Լա՛ւ, ինչպէ՞ս կըլլայ որ պարտա-
կան եղած ես Ռէս Մարտարին պարտ-
քը վճարելու... : Կը ճանչնայիր
դինքր :

— Մտիկ ըրէ՛. ես Ռէս Մարտար
չեմ ճանչնար, բայց անոր որդին իմ
մտերիմս եղած է ու վրաս պարտք
դրած է քեզի յանձնելու դրամական
աւանդ մը... :

— Անոր որդին ո՞ղջ է :

— Այո՛ :

— Ո՞ր կը գտնուի :

— Արտարաւայր մը :

— Հոն տեղ ճանչցա՞ր դինքր :

— Ծի՛չդ է :

— Որչա՞փ է ինձի յանձնելիք աւան-

դէդ :

ին, վիճակ կը ձգուի ընտրելիներուն
միջեւ :

ՅՕԴՈՒԱՄ 6. Տնօրէն Խորհուրդին ան-
դամները կ'ընտրուին երկու տարուան
համար, տարին անգամ մը անգամն՝ բուն
կէսը՝ բաց ի Նախագահէն՝ կը վերա-
նորոգուի :

ՅՕԴՈՒԱՄ 7. Տնօրէն Խորհուրդին ան-
դամները վերնարելի են :

ՅՕԴՈՒԱՄ 8. Տնօրէն Խորհուրդը կը
բաղկանայ եօթն անդամներէ, Ատենա-
պետ, Փօխ-Ատենապետ, Ատենադպիր,
Գանձապահ եւ երեք խորհրդական ան-
դամ :

ՅՕԴՈՒԱՄ 9. Տնօրէն Խորհուրդին
նիստերը օրինաւոր են երբ անդամոց
մեծամասնութիւնը ներկայ է :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴՈՒԱՄ 10. Տնօրէն Խորհուրդը
տարին անգամ մը Ընդհ. Ժողով կը
գումարէ, Ընկերութեան նիւթական
ու բարոյական կացութեան ու տար-
ուան ընթացքին իր կատարած բոլոր
գործերուն մասին հաշիւ տալու հա-
մար :

ՅՕԴՈՒԱՄ 11. Կարեւոր պարագա-
ներու մէջ, Տնօրէն Խորհուրդը իր
Նախաձեռնութեամբ կամ Ընկերու-
թեան անդամոց մէկ երրորդին առա-
ջարկութեամբ՝ կարող է արտաքոյ
կարգի Ընդհ. Ժողով գումարել :

ՅՕԴՈՒԱՄ 12. Տնօրէն Խորհուրդը,
Ընդհանուր Ժողովի գումարումէն եւ-
կու ամիս առաջ՝ պիտի պատրաստէ
օրակարգը եւ քննիչու խնդիրներու
յայտագիրը ինչպէ՞ս եւ յաջորդ տար-
ուան գործունէութեան նախագիծը
եւ ելեւմտից նախահաշիւը եւ պիտի
դրկէ անգամներուն : Ընդհանուր Ժո-
ղովի թեւականը եւ Օրակարգը կան-
խաւ պիտի հրատարակէ թերթերու
մէջ :

ՅՕԴՈՒԱՄ 13. Ընդհանուր Ժողո-
վը իր բւրգանչիւր գումարման իր
դիւանը կընտրէ Ընկերութեան ան-
դամոց մէջէն :

ՅՕԴՈՒԱՄ 14. Ընդհ. Ժողովին կա-
րող են մասնակցիլ Ընկերութեան
բոլոր անդամները եւ՝ կամ իրենց
լիազօրները : Մէկ լիազօր չի կրնար
աւելի ձայն ունենալ քան 1/10 ը
Ընդհ. Ժողովի ձայններուն :

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԵԱՆՈՒՄԲԵՐ

ՅՕԴՈՒԱՄ 15. Տնօրէն Խորհուրդը
կարող է օժանդակ մասնախումբեր

— Շիտակն ըսելով՝ չեմ գիտեր...
Ռէս Մարտար որդին ձեռքովը լաթի
մը մէջ ծրարելու եւ կնքած յանձնելու է
ինձի այդ գումարը : Հարկա՛ւ տես-
րակը նայելէդ ետքը՝ մէկ ոսկի պա-
կաս. մէկ ոսկի աւելի ըլլալով բան
մը չէ... ո՛չ գուն պիտի փնտռես եւ
ո՛չ ալ ան :

— Բանի որ աքսորաւայրը կը գըտ-
նուի, ուսկի՞ց չահած է այդ գումա-
րը :

Անիկա խելացի ու ճարպիկ մէկն
էր : ամենուն սէրը վայելելով՝ յա-
ջողած էր բերդին մէջ սրճագործութիւն
ընելու առողջ գրամ շահիլ :

— Բանի՞ տարուան գատապարտու-
թիւն մ'ունի :

— Ռէս Մարտար ի որդե՞ն :

— Այո՛ :

— Մինչեւ ցտակ... ամենեւին յոյս

չը կ'այ անոր համար :

— Ատիկա աղէ՛կ. բայց կուզէի գիտ-
նալ թէ՛ Ռէս Մարտարին որդին ուս-
կից պիտի իմանայ իր պատրուին վը

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ՊԱՐԻՊ ԱԽՊԵՐ...

(Շար. Նախորդ թիւէն)

Ե.

Շիրվանեցի Գաբրէլ Ազայի գտնուած
գոց չուկուն տառ Կարիպ Ախպէր ու՛
իր քրտական տարազով՝ այդ անարգ
մարդուն ներկայացաւ :

Տարինը ետքը՝ խոփած ու գարշա-
տիպ վաշխառուն բնա՛ւ փոխուած չէր.
անոր գծուած ու ստորաքարչ կերպու-
րանքին վրայ հոգիին նո՛յն սեւ ու թիւ-
նըն ու նո՛յն ուրուանկաւրը պատկե-
րուած կը մնար :

— Բարե՛ւ, ջոջ Աղա՛, մըմնջեց
Կարիպ Ախպէր, կիցկտուր թուրքե-
րէնով մը :

— Աստուծո բարի՛ն... պատասխա-

նեց վաշխառուն՝ գրասեղանին վրայէն
ճաղատ ու կոճղի մը նմանող գլուխը
դէպի խօսակիցը դարձնելով, ի՞նչ կայ
... ի՞նչ կողմս :

— Շիրվանեցի Գաբրէլ Ազան դո՞ւն
ես :

— Այո՛, ես եմ :

— Աղէ՛կ. Ա... գեղացի Ռէս Մա-
րտարն առնելիք ունի՞ս :

— Ի՞նչ կայ որ...

— Կը հարցունես :

— Վաշխառուն պահ մը մտածելէն
ետքը՝ պատասխանեց :

— Ունիմ :

— Ինչքա՞ն է :

— Ի՞նչ գիտնամ... մարդը մեռաւ
ու ես անոր մորհակարէ մէկզի նետած
եմ :

— Կորսու՞ած է :

— Անտարակո՛յս... բայց հին անտ-
րակներուս մէջ արձանագրուած է :

— Հոգ չէ՛, թո՛ղ ատանկ ըլլայ...
նայէ՛ որ պոնես, որովհետեւ պար-
տական եղած եմ վճարելու :

հաստատել ուրիշ հայաբնակ քաղաքներու մէջ : Այդ օժանդակ Մասնախումբերը՝ պիտի գործեն Տնօրէն Խորհուրդին հրահանգով :

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱՄ 16. Կանոնադրութեան օրէնքէ մէկ յօդուածը այն ատեն միայն կրնայ փոփոխուիլ երբ Ընգ. Ժողովը ձայնբերու երկու երրորդի մեծամասնութեամբ կորոշէ այդ փոփոխութիւնը :

ՅՕԴՈՒԱՄ 17. Այն պարագային երբ Ընկերութիւնը լուծուի, իր գրամագլուխն ու բոլոր գոյքերը պիտի յանձնուին կէսը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, կէսը Պոլսոյ Հայոց Պատրիարքին՝ Հայ Ժողովրդի կրթական գործին յատկացուելու համար :

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՏՈՒՄԱՅԻ ՄԷՋ



Յայտնի է թէ պատկերապաշտութիւնը որչափ առաջ գացած է Ռուսիոյ մէջ, ուր ամեն տուն ամեն գործարան եւ խանութ, ամեն պաշտօնատուն եւ նոյն իսկ շատ հասարակայնի վայրեր իրենց սրբոց պատկերներն ունին :

Մեր ընթերցողք կը յիշեն թէ Ձաւրը քանի հարեւրաւոր պատկերներ խրկեց ի Մանչուրիա երբ իր զօրքերը կը պատերազմէին Ճափոնի դէմ, որպէսզի անոնց հրաշքովը կարենան յաղթել իրենց թշնամուին : Դժբաղդաբար իրենց համար, պատկերներուն անտարբեր մնալովը իրենց կապիկ կարծած ճափոնցի զօրքերէն անխնայ քանջախուցեցան :

Այս անգամ կերեւի թէ Ձաւրը նոր փորձ մալ ընել ուզեր է անշուշտ իր ապահովութեանը համար, տեսնելով Տումայի անդամոց մեծ մասին սահմանադրական-առկալարական կուսակցութենէն ընտրուիլը :

Կը կարգանք արդարեւ Ռուսիոյ կառավարութեան պաշտօնական «Ժողովուրդ» ար Ս Բեթերպուերկ լրագրի մէջ որ Ձաւրը՝ Տումայի ժողովատեղին եղող Տարիտեան պալատին սրահներուն պատերուն վրայ 68 սրբոց պատկերներ կախել տուեր է :


Այս պատկերէն քսան հատը Աստուածածնայ պատկերներ են քսան հատը սքանչելագործ Ս. Նիկողոսի

եւ քսան հատն ալ օրինակուած են Մարիամ կոյսին այն պատկերէն՝ որ յիշեալ լրագրին ըսածին նայելով : «Մարդկային ձեռքով չի նուաճու» եղեր : Իսկ մնացեալ 8 հատը ալ եւ այլ սրբոց պատկերները են :

Այս անգամ կինայ Ձաւրը անկակած յաղթութիւն տանիլ իւր հակառակորդ Տումային դէմ, եւ գիշերները հանդարտ քնանալ քանի որ իրեն անուանակից պաշտպան հրաշագործ Ս. Նիկողոսներ եւ մատրիկային ձեռքով չխաշուած պատկեր մը ունի իրեն վրայ հակող :

Օրբիքնուա, օ մոռնա...

ԼԵՁՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍ ՄԸ



Պոլսոյ «Մանգուսէի Էֆէրեար» լրագրի որ միշտ իրեն սովորութիւնը րրած է եւ մասնաւոր հաճոյք մը կը գայ «Բեզմեդար» սխալ թարգմանութիւնները ծաղրելով երեսին տալ. եւ կը պարծենայ իր տուած անեւտրական տեղեկութիւններովը. այս անգամ իր 1486 թ. թիւերէ մէջ Հոռոմէ 9 մայիս թուականաւ քաշուած հեռագրի մը թարգմանութիւնը կը հրատարակէ հետեւեալ խիստ ծիծաղալիք եւ անմիտ կերպով : «Թղթատարական համաժողովրդ որոնք չեն նամակներու 15 կրամ ծանրութիւնը բարձրացնել 20 կրամի 25 սանդղի մի սովորական փակագիրը պահելով «առաջին նաւահանգիստին» համար, «բակ յաջորդական նաւահանգիստներ» որուն համար փոխանակ 25ի 15 սանդղի մակագին որոշեց անել » :

Ըսել է որ ալ այսուհետեւ դժուար պիտի ըլլայ հետեւ տեղեր նամակ խրկել, ինչու որ եթէ թղթատար շտաբենաւ մը տասը քսան նաւահանգիստներ հանդիպէ, ամեն մէկ նաւահանգիստի համար 15 սանդղի տրուելով նամակ մը մինչեւ որ իր տեղը հասնի հարկ պիտի ըլլայ մի քանի ֆրանք վճարել : Կը զարմանալ թէ ինչպէ՞ս առեւտրական գործոց մասնակցէ հոն գիտացող մեծածաւալ թիւեր մը աս կէտը չէ ըմբռնիր եւ խոշոր սխալ մը գործեր է իւր թարգմանութեան մէջ :

Ֆրանսերէն Port կը նշանակէ «նաւահանգիստ» եւ «վարձ» : Հեռագրին խօսքերը ամակի վրայ ըլլալով բոլորովն պէտք էր թարգմանուէր վարձ եւ ոչ նաւահանգիստ. որով որոշակի կը հակոցուէր թէ պարզ այսինքն 20

կրամնոց նամակի մը համար 25 սանդղի վճարուելով, անկէք աւելի կը շտապ նամակի մը իւրաքանչիւր յաջորդական 20 կրամի համար փոխանակ 25 սանդղի մի 15 սանդղի պիտի վճարուէր : Ահա՛ հեռագրին ըսածը :

ՊՐԱՅԻԼԱՅԻ ՀԱՅ ՎԱՂՈՒԹԸ

Ինչպէս ուրիշ անգամներ, նոյնպէս եւ հիմայ դեռ եւս պիտի յաջուի, պիտի կսկծայ, պիտի տխրի Պրայիլայի հայութիւնը իր տուած կորուստներուն տոթիւ. որ երբէք չեն պակսիր գրեթէ. եւ վերջապէս խորհելու կէտը սա է որ ինչ քանի վերածելու է ներկայ վիճակը եւ գրութիւնը որ գոնէ քիչ մը մխրթարական ըլլայ. եթէ մխրթարական կէտ մը կայ այն ալ անհարգարժան է քաղաքական տեսակէտով. թէպէտ գաղութներն Պրայիլայի հայ մասին կը պատկանի. բայց միայն Պրայիլայի չէ որ այս բաղդին է արժանացած այլ ամբողջ հայութիւնը ուր որ է ինչ որ կը գտնուին. յայտնի է թէ մարդիկ կարող են զիմարելու. ամեն պատահարներու եւ պէս պէս նեղութիւններ, եւ միայն անկարող են զիմարելու. մի քանի որը նախախնամութիւնն է սահմանած մարդոց համար որ է մահը առանց խնայելու այն կեանքներուն որոնք դեռ ապրելու պէտքը ունին, եւ այն կեանքներուն պէտքը ընդհանրապէս զգալի կը դառնայ աղքատացող հայ ազգը իր շատ մը կորուստները ունեցած է. իր ամենակրեւոր մարդիկը կորստնցուցած է եւ այս օր իր կարգին կորուստ մըն ալ կուտայ Պրայիլայի մէջ եւր պանդուխտ Աղգալիները խոր սուգի մէջ թողուց, նամանաւանդ որ մեծամասնութիւն կը կազմեն Միջինները : Հոս կը յիշենք մեր ունեցած կորուստը Տիւրք Մէլիք Մանուկեան քնիկ Միջին, ռուսական ժամանակ անկողնոյ ծառայելէ վերջ 30-35 տարեկան հասակին մէջ կնքեց իր մահկանացուն. նա հանրածանոթ անձնաւորութիւն մըն էր գրեթէ բոլոր Ռումանիոյ եւ Պուլկարիոյ պանդուխտ աղքատացող. ինչպէս ծանօթ անձնաւորութիւնք նոյնպէս Մէլիք Մանուկեան միշտ օգտակար կրցած է հայ գիտնալ աղքատացող իր բարի ձիրքով եւ քնաւորութեամբ այնպէս որ իր վերջին յուսան անգամ խնայած չէ հանդիպող կուրտ աղքատացող եւ նամանաւանդ Աղգալիներին :

Կը գտնուիմ ցմահ բերդարգելութեան մը դատապարտուած : Ամեն յոյս կորսուած է ինծի համար : Իսկ ինչ ետքը՝ գերեզման մ'ունիմ :

Արդ, գործերիս հետ, որ՝ քուտ մը ըլլալով հանդերձ, արտաւազ հոգիս ժողովին եղած է, կը փութամ 3895 դահեկանի գումար մը խրկել ձեզ եւ խնդրի որ բարեհաճք ձեր պահանջը վար գնելէն ետք՝ մնացեալն բնտանիքի վճարել : ...

Ո՛հ, ջոյ Աղա՛, միայն վերն՝ Աստուած ու Աղա՛ զոր գիտեցք իմ կեանքիս չէ՛մ արձակուա՛յս այս վճարը :

Մտերիմս վստահելի մէկն է. անոր կարող էք մանրամասն տեղեկութիւններ տալ բնտանիքէս ողջ կամ մեռած ըլլալուն վրայ :

Ընդունեցէ՛ք որդիական բարեկեցութիւնս : Այսան կարեպենց

Թ. Գ. — Այն ծրարն, որուն մէջ 3895 դահեկանի գումար կը գտնուի, իմ անձնական կնիքովս զտուած է. ու

գային Ս. Գործին համար, Հայ գործեալին յուղարկաւորութիւնը շատ չքեղ կերպով կատարուեցաւ. ներկայութեամբ թէ տեղացի եւ թէ պանդուխտ աղքատացող նոյնպէս ներկայ կը գտնուէին շատ մը օտար աղքատներն Ռուման, Յոյն եւ Պուլկար հասարակութիւնք : մեղաւորան արարողութեան պահուն հոծ բազմութիւն մը խոնուած էր եկեղեցին ուր ներդաշնակօրէն կը կատարուէր արարողութիւնը. ճանապարհին մեղաւորներ կը մասնակցէին անթիւ բազմութիւն մը հանդիման կատաւարութեան զինուորական նուագախմբով. կը համարձակիմ ըսելու, թէ դեռ նմանը տեսնուած չէ այսպէս թաղման արարողութիւն մը Պրայիլայի պանդուխտ աղքատացող մէջ : Վերջապէս հանգիստ Մէլիք Մանուկեանի, եւ երկնային միջիթարութիւն պանդուխտ աղքատացող Պրայիլայի :

ՊԱՆԴՈՒԽՆԵՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱԽԷՐ

Հոգարարձութեան նկատելով որ իրենց պաշտօնէն ինքնագամ հրաժարող վարժուհիներու խնդրոյ, նկատմամբ այլ ընդ այլոյ եւ խեղաթիւրեալ տարածախնութիւններ կը չլինի տեղուոյ հասարակութեան մէջ. կը փութայ ներկայիս յայտարարել թէ՛ ամեն անոնք որք կը փափաքին ճշգրիտ եւ վաւերական տեղեկութիւններ տալու, հաճին, զիմել հոգաբարձութեանս յոռու ջիկայ կիրակէ ժամը 10 առաւօտեան Աղգ. Խորհրդարանի մէջ :

Հոգարարձութեան վստահի Աղգ. երկուեւ վարժարանաց. (Կնիք)

1906 Մայիս 7

Մ Շ Ա Կ

Օրաթերթ քաղաքական, գրական

Բաժնեկիր՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան :

Հասցէ՝ Խմբագրութիւն «Մ Շ Ա Կ»

(Կովկաս)

Թիֆլիս



ճարտիւրը : —Դիւրին է. դուն գրութիւնով մը կը լայնեան առած գրամը քանակութիւնը ու միանգամայն ո՛ր եւ է պահալ մը շունենալով. ան ատեն ես կը խրկեմ ուղղակի իրեն իրքեւ անգործադիր մը : Զըլլար :

— Ի՞նչու չըլլար... աւանդը քովդ է :

— Աղը կարող եմ յանձնել... դուն անգործադիրը պատրաստէ՛ :

—Ու կարեպ Ախպէր զորս ելաւ գրասենեակէն : Դիմեց սեղանաւորի մը ու մէկ ոսկիի «ժամու պիկ» առաւ : Երբ վերին գոյն ու ոսկիի մը մեծութիւն ունէր : Այս գրամը յատկացուած էր Լիկեղեցիներու պնակին համար : Երբեք լսելի մը մէջ, կարեպ ամեն կողմէն ու խնամով մը կնքեց : Յետոյ չիմոռնաւ. նամակ մըն ալ գրեց՝ ուղղելով վախճանին :

Հետեւ եւ օրը գրասենեակը դնաց : Հաստատ ու անվրդով իզգանակաւ մը հարցուց :

— Պատրաստ է. ջոյ Աղա՛ :

— Պատրաստ է հ. չիւր... պատասխանեց վախճանուն ու թուղթի մը վրայ ցոյց տուաւ խոսն ի խոսն թուանշանները : Նայէ՛, հաշիւէ կը հասկնա՞ս :

—Ո՛հ, չեմ հասկնար... ես կարգալ չեմ գիտեր : Բայց սուտ չեմ բեր, ես՝... ես կը հաւատամ քու ըսածիդ, որքան է :

— 3754 դահեկան է ամբողջ պարտքը :

— Է՛հ, ուրեմն կարգա՛ւ աս նամակը զոր մոռցայ երեկ յանձնելու քեզի : Ինչո՞ւ Մուրատի որդին տուաւ :

— Վախճանունս բացաւ աղ նամակն, որուն մէջ գրուած էր :

Պիւնկաղի 17 Յուլիս 1897

Մեծապատիւ

Գարեկ Աղա Շիրազեան

Վան-Քաղաք

Բարեկամս,

Շուրջ տասներեք տարիներէ ի վեր այս զարհուրելի աքորաւայրին մէջ

կնքամովն վրայ յայտնապէս կը տեսնուին Ա. Կ. սկզբնաւորներն՝ անուրիս ու մակաւնուրիս :

Նոյն

վախճանուն խեղաթիւր մի մէջ էր : Անոր ձեռքը անաւնկ որս մ'իւնկած էր, որ երազ մը կը թուէր : Ուստի չկրնայով սպասել հարցուց :

—Ո՛ր է ծրարը :

—Նա՛... քո՛վս է, մրմնջեց Կարեպ Ախպէր երկիւղալի ձեռակերպութիւն մը ընելով : Ի՞նչ աչքի թո՛ղ չը գտնուէ... Ի՞նչ կրկնայ, ի՞նչ չըլլար : Միայն թէ աղէկ մը գիտէ՛, ինչո՞ւ Մուրատի որդին պիտի է, թէ ո՛չ. յետոյ կի՛րք կեղծուած է... :

—Ինչքը կեղծուած չէ եւ նամակին գէ՛րն ալ անոր է. նկատել տուաւ վախճանուն ու սեղանին վրայ դրուած ծրարը գրամակղին մէջ գլորեց՝ լի վստահութեամբ մը :

—Անգործադիր ստորագրեցի՞ր :

—Այո՛, Այո՛... կրնաք մեկնել :

Կարեպ Ախպէր առաւ անգործադիրն ու զուրս նետուեցաւ այդ զարհուրելի որջէն :

(Շարունակելի)

